

Ս. Յակոբայ մատենագրանին անթուական ձեռագիր մը (թ. 1290) կը պարունակէ պիտանի և անպէտ մասերով և խառնափնդոր գիրով գրուածք մը. «Պատմութիւն պատկերիս, որ եղեալ է ի Յոսանկրասան ի Հոռոմ, որ պատմեաց մեզ պատրի Անտոնն քարեքմիշկըն» խորագրով. անոր համառօտութիւնը կուտանք հոս: Յրանչիսկեան կրօնաւոր մը Հայոց մեծաւորին կը դիմէ խնդրելով որ Ս. Հրեշտակապետի եկեղեցւոյն Յիսուսի կոպուած ձիթենիէն կոճղ մը տոյ իրեն. կրօնաւորը կ'ստանայ կոճղը և ինքն հիւան ըլլալով՝ նոյն կոճղէն կը շինէ մանուկի մը պատկերը ու զայն սնտուկին մէջ դնելով կը տանի Հոռոմ: Բայց ճանապարհին փոթորիկ կը պատահի և սնտուկը ծովը կ'իջնայ: Պատրի Անտոն իբր ականատես կարգ մը հրաշապատում գրոյցներ կը վերագրէ ձիթենիի կոճղէն շինուած մանուկ պատկերին՝ ու ձեռագրիս անանուն հայ գրիչը միամտօրէն կը հաւատայ պատմուած հրաշքներուն. զոր օրինակ՝ պատկերին ծովուն վրայ քայելով Հոռոմ հասնիլը. նոյն պատկերին համար վանք ու եկեղեցի կառուցուիլը Սուրբ Երեմիայ անուամբ. ազնուական կնոջ մը կողմէն պատկերը վանքէն գողնալով իր տունը տանիլը. բայց յետոյ պատկերին ինքնիրեն նոյն եկեղեցին վերադառնալը. դարձեալ ուրիշ կին մ'ալ ի գոհացումն իր բարեպաշտութեան, նոյն պատկերը գողնալով և անոր նմանը տեղը դնելով տուն տանիլը, և երկրորդ օրը եկեղեցի դառնալուն գողցուածը իր տեղը եկած կեցած տեսնելը և այլն: Այս դէպքերէն յետոյ, կը յարէ պատմողը, եկեղեցիին պաշտօնեաները կ'ստիպուին պատկերը պահել գանձատան մէջ, բանալիով կը փակեն ու պահապան կը դնեն և միայն Գրիստոսի Ս. Ծննդեան տօնին դուրս կը հանեն:

Նոյն ձիթենիին նկատմամբ ժողովրդեան մէջ տիրող ծայր աստիճան բարեպաշտութեան հետեանքով հիւսուած ու շինուած են այսպիսի հրաշապատում գրոյցներ՝ մանաւանդ Արեւմուտքի մէջ, ինչպէս կ'երևի վերի տողերէն:

## Բ. Բանօր.

Աւանդական յիշատակներէն երկրորդն է Բանօր, որ առային կը կոչուի. վասն զի մեր Փրկիչը երբ Աննայի տունը բերուեցաւ առաջին անգամ ըլլալով այդ տեղը բանտարկուեցաւ. և յետոյ